

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀԱՏՆ ԸՆԴԴԵՄ ՔԱՂԱՔԱՅՈՒ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

Ժամանակակից հասարակություններում սոցիալական կենսագործունեության և, մասնավորապես, քաղաքական պայքարի կազմակերպման առումով մեծ դեր և նշանակություն ունեն սոցիալական ընտրանին և պետական բյուրոկրատական ապարատը: Այս առնչությամբ, սակայն, արդիականության դրսևորման ժամանակակից փուլը բնութագրվում է շատ կարևոր երկու նոր առանձնահատկություններով, որոնք պայմանավորում են ինչպես սոցիալական համակեցության կազմակերպման ընդհանուր օրինաչափությունները, այնպես էլ սոցիալական մասնավոր պրակտիկաների յուրահատկությունները:

Առաջին առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն իր գործառնության դասական փուլի կամ, ինչպես Ջ. Բաումանն է բնորոշում, «կարծր», ծանր փուլի, երբ գերիշխում էր պատրանքային մի գիտակցություն, համաձայն որի՝ սոցիալական կատարելությունը հասանելի բաղձանք է և պատմական հեռանկարում ուրվագծվում է սոցիալական այնպիսի արդար և ներդաշնակ համակեցության կազմակերպումը, որտեղ առավելագույնս պետք է բավարարվեն մարդկային բոլոր պահանջմունքները, արդիականության ժամանակակից փուլն այլընտրանքային է: Այս փուլում միագիծ զարգացման, կանխատեսելի և կառավարելի ապագայի կառուցման ծրագրերն այլևս անիրական են: Ժամանակակից պայմաններում միակ «երաշխավորված» որոշակիությունը անորոշությունն է, որի պայմաններում հասարակությունը մտնում է գործառնության ռիսկային գոտի, որտեղ անկանխատեսելիությունը դառնում է սոցիոկեցության կայուն ձև, և կյանքի ու կենսագործունեության յուրաքանչյուր դրսևորում դառնում է խնդիր: Սոցիալական գոյությունը վերածվում է սուբյեկտիվացված և անհատացված ռիսկերի ու հակասությունների մի ամբողջության, որտեղ պատմությունը սեղմվելով դառնում է հավերժական ներկա, և ամեն ինչ պատվում է մարդու սեփական «ես»-ի և անձնական խնդիրների շուրջը:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ պետությունն ամեն կերպ փորձում է հրաժարվել շուկայական տնտեսության տոտալ վերահսկողության իր նախկին գործառնություններից: Արդիականացման անընդհատ բարդացող խնդիրներն ու պարտականությունները պետությունն այլևս չի ցանկանում սեփականաշնորհել: Այն, ինչ նախկինում հանրային քննարկման և կոլեկտիվ պատասխանատվության խնդիր էր, այլևս հանձնվում է սոցիալական մասնավոր դերակատարների ազատ կամքին և նրանց տնօրինած ռեսուրսներին: Գիշտ է, սոցիալական համապատասխան հաստատությունները դեռևս լրիվ չեն հրաժարվել օրենսդրական ճանապարհով հասարակությունը կատարելագործելու գաղափարից, սակայն աստի-

ճանաբար փոխվում են շեշտադրումները: Համասոցիալական նշանակություն ունեցող խնդիրներից անցում է կատարվում դեպի մասնավոր, անհատական խնդիրները, և մարդկային գոյությունը դառնում է ավելի ու ավելի հատվածական: Անհատացված խնդիրների շարունակական աճը կեցության ոլորտից արտանդում է վերացական և խորթ ընկալվող հասարակականը, անհատականը մտքերի ոլորտից, մարդու ներաշխարհից ներխուժում է հասարակական կյանք: Արհամարհված հասարակական պարտավորությունները ստորադասվում են անհատական հաջողությանը: Քաղաքական աճող անտարբերության հանրային վակուումը հագեցվում է անձնական կյանքի ինտիմությամբ, ինչի հետևանքով կյանքի հանրային ոլորտն «ապագադուրացվում» է:

Բնական է, որ հանրային տրանսցենդենտալ արժեքների մերժման և սոցիոնշակութային անորոշության պայմաններում ամենից շատ տուժում է բարոյականությունը. անկում են ապրում բարքերը, խաթարվում է արժեքանորմատիվային համակարգը: Նման բարոյական ճգնաժամից ելք փնտրելու ու հասարակական արժանապատիվ համակեցություն վերականգնելու համար նախևառաջ անհրաժեշտ է վերաիմաստավորել սոցիալական անօտարելի արժեքների ամբողջությունը: Այս առնչությամբ շատ կարևոր նշանակություն ունի հասարակական և պետական իշխանությունների միջև գտնվող այն առանձնահատուկ սոցիոնշակութային տարածությունը, որը կոչվում է «քաղաքացիական ոլորտ»: Քաղաքացիական ոլորտն ամենից առաջ սահմանվում և գործառնում է օրենքի նորմերով և մարդու երաշխավորված իրավունքներով: Քաղաքացիական ոլորտի համար կարևոր նշանակություն ունեն նաև առանձին քաղաքացիների հույզերն ու ապրումները, արժեքներն ու իդեալները, զբաղեցրած դիրքից ու պաշտոնից անկախ՝ հասարակության յուրաքանչյուր անդամի հետ համերաշխության գաղափարը: Քաղաքացին պետության սոսկական մասնիկը չէ, նա նաև հանրային ոլորտի սրտացավ մասնակիցն ու համամասնակիցն է, համահասարակական նշանակություն ունեցող բոլոր խնդիրների քննարկման ու լուծման գործուն դերակատարը: Այսինքն՝ նա, որոշակի իմաստով, հասարակության կողմից կոլեկտիվ վստահության երաշխավորագիր ստացած սոցիալական գործակալ է: Քաղաքացին սոցիալական համերաշխության կայացման ռահվիրան է, ժողովրդավարական սկզբունքների իրացման ակտիվ ու պատասխանատու հանձնառուն: Ձևական իմաստով քաղաքացի ծնվում են օրենքի նեղ իմաստով: Քաղաքացիությունը փաստացի է դառնում միայն այն ժամանակ, երբ նրանք, ովքեր արդեն քաղաքացի են, հավատում և ընդունում են, որ անձն ընդունակ է քաղաքացիական վարք դրսևորելու (պատահական չէ, որ երեխաներն ու հանցագործները քվեարկելու իրավունք չունեն): «Պոտենցիալ լավ քաղաքացին,- նշում է Ջ. Ալեքսանդերը,- պետք է ներկայանա քաղաքացիական հասարակության դիսկուրսում, պետք է լինի ռացիոնալ և ազնիվ, վստահող, բայց և քննադատական վերաբերմունք դրսևորող, բաց և համագործակցող, սակայն անպայմանորեն՝ անկախ անձ»¹: Քաղաքացիական ոլորտը պետք է հագեցած լինի համահասարակական իդեալներով: Իդեալներ չունեցող մար-

¹ Александр Дж. Власть, политика, гражданская сфера // "Социс", 2009, № 10, с. 9.

դիկ ապրում են միայն ներկայով, քանի որ նրանց համար գերխնդիր է դառնում առընթերը: Մինչդեռ քաղաքացու համար կարևոր են ժամանակի բոլոր եղանակները (անցյալ, ներկա, ապագա): Քաղաքացիականը ոչ միայն համոզմունքների, այլև հաստատությունների ամբողջություն է: Այդ հաստատությունները խրախուսում են քաղաքացիական վարքի համար և պատժում հակաքաղաքացիական գործողությունների համար: Սակայն, խորացող անորոշության և լավ քաղաքացի ունենալու պետության անկեղծ ցանկության նվազման պայմաններում անցում է կատարվում պատասխանատու և ինքնիշխան անհատականություններից դեպի զանգվածային հասարակություն, որտեղ **գերիշխանության գաղափարի մտասևեռումն ունեցող «զանգվածի մարդը»** (Խ. Օրտեգա-ի-Գասետ) **իր մտահոգությունների շրջանակից արտամղում է սոցիալականը: Մարդը քաղաքացուց աստիճանաբար վերածվում է զուտ անհատ-սպառողի:** Անօտարելի նախկին արժեքներն ստանում են ապրանքաիրային տեսք: Սրա հետևանքով անհատական գոյատևման ասոցիալական հիմունքները, ձևախեղելով մարդուն, հասարակականի նկատմամբ նրան դարձնում են անհաղորդ և անտարբեր: Անձնական ու հասարակականը, ինչպես և նախկինում, շարունակում են կապված մնալ, սակայն մարդու կյանքը դառնում է ոչ այնքան հասարակության հետ փոխգործակցության, որքան սոցիալականից հրաժարման ոլորտ: Փոխակերպվում է մարդկանց հոգեմտակերտվածքը, բյուրեղանում է նոր աշխարհայացք, ձևավորվում է ժամանակակից սոցիումի սկզբունքորեն նոր տիպ՝ «անհատացված հասարակությունը» (Բաուման): Այդ հասարակությունը բնութագրվում է նրանով, որ **մարդիկ կորցնում են սոցիալական բազմաթիվ գործընթացների նկատմամբ վերահսկողությունը, և չվերահսկվող փոփոխությունների շարունակական աճը հանգեցնում է անորոշության ու անպաշտպանվածության զգացողության, և, որ հատկանշական է, հանուն արդյունքների անմիջական ստացման՝ մարդը հրաժարվում է հեռահար նպատակներից, ինչը, պարզունակացնելով գոյությունը, հանգեցնում է ինչպես սոցիալական, այնպես էլ անհատական կյանքի տրոհմանը: Կորցնելով սոցիալական գործընթացների նկատմամբ վերահսկողությունը՝ մարդը դառնում է իներտ և անտարբեր:** Ջսպանակված սոցիալական լարվածության հետևանքով բոլորին համակում է էկզիստենցիալ տագնապը: Փորձությունները զուտ անհատական պրոբլեմներ ընկալող մարդկանց մոտ ձևավորվում է այն պատկերացումը, թե դրանց դեմ կարելի է պայքարել մեն-մենակ: Կոտորակված ժամանակում ոմանք կամովի, ոմանք ակամա դառնում են ծայրահեղ անհատապաշտներ: Միայն անհատական խնդիրներով զբաղված, ինքնամեկուսացված, անձնական կյանքի ներ շրջանակում ամփոփված վարքի վտանգավոր միտումների մասին ժամանակին անդրադարձել է Ա. Տոքվիլը՝ այն բնութագրելով որպես սոցիալական վնասակար հիվանդություն: Նրա կարծիքով, անհատապաշտությունը հնարավոր է հաղթահարել միայն քաղաքացիական կեցվածքով: Ֆրանսիացի մտածողը գտնում էր, որ անհատը քաղաքացու վատթարագույն թշնամին է: «Քաղաքացին այն մարդն է, որը հակված է անձնական բարեկեցության հասնել քաղաքի բարեկեցության միջոցով, մինչդեռ կասկածամիտ անհատն անտարբեր է, նա զգուշավոր վերա-

բերմունք է դրսևորում «ընդհանուր պատճառի», «ընդհանուր բարիքի», «արդար հասարակության» նկատմամբ»²: Քաղաքացի է դառնում նա, ով հաղթահարում է ինքնակամությունը, եսասիրական շահը և դրանք ծառայեցնելով ընդհանուրին՝ դառնում ամբողջի անհատելի մասը:

Եթե անհատը քաղաքացու վատթարագույն թշնամին է, և եթե անհատացունը քաղաքացիության և դրա վրա հիմնված քաղաքականությանը տհաճություններ է պատճառում, ապա դա բացատրվում է նրանով, որ առանձին մարդկանց մտահոգություններն ու շահերը ավետափ լցնում են հասարակական տարածությունը՝ հավակնելով դառնալ դրա միակ օրինական բնակիչները: Հետևանքը լինում է այն, որ **բացի անհատականից՝ կենսիմաստային արժեհամակարգից արտանդվում է ամեն ինչ, «մասնավորը» կլանում է «հասարակականը»**: Լավատեսական այն հույսերը, թե անհատացված անձինք կրկին կներառվեն քաղաքացիության հանրապետական արժեքների և հարաբերությունների մեջ, աղոտ են: Վերստին հասարակական բեմահարթակ ելնելու գործունեության դրդապատճառներ են դառնում ոչ թե ընդհանուր բարիքի նշանակության մասին քննարկումները կամ դրան հասնելու ուղիների ու արժանապատիվ համակցության կազմակերպման սկզբունքների որոնումը, այլ ամեն գնով «ցանցին միանալու» ջանադիր պահանջումները: Այս առնչությամբ Ռիչարդ Սենետը նշում է, որ «ընդհանրության կառուցման» հնարավոր միակ և նախընտրելի եղանակ է դառնում մարդկանց ինտիմ կյանքի բացահայտումը³: Սակայն, այս մեթոդը կարող է ընդամենը «համայնքներ» ծնել, նույնքան փխրուն և վաղանցիկ, որքան անկանոն դեգերող մարդկային այն հույզերը, որոնք խաղաղ հանգրվանի շարունակական փնտրտուքում պատահական կարգով մեկ նպատակից մյուսին են անցնում: Ընդհանուր հոգսերի, տազնապների, նախանձի կամ ատելության այդ ժամանակավոր հանրույթներն ընդամենը «հանրույթ կախիչներ» են, որոնցից բազմաթիվ միայնակ մարդիկ կախում են իրենց անհատական վախերն ու սարսափները: «Սիրո և օգնության որոնումներում, - նկատում է գերմանացի ժամանակակից մտածող Ուլրիխ Բեկը, - անհետացող սոցիալական նորմերից հայտնվում է վախեցած, նախահարձակ, մերկ էգոն: Ինքնորոնման և անկեղծ շփման կարոտ էգոն մոլորվում է սեփական ջունգլիներում... Սեփական «ես»-ի խավարում թափառող մարդն անընդունակ է նկատելու, որ էգոյի մենախցում փակվելը զանգվածային պատիժ է»⁴: Գաղութացնելով հասարակական տարածությունը՝ մասնավորն այնտեղից վտարում է այն ամենը, ինչն ամբողջությամբ և անմնացորդ չի կարող արտահայտվել անձնական շահերի, հոգսերի և ձգտումների հասկացություններով: Անհատի համար հասարակական տարածությունն ընկալվում է որպես մի հսկայական էկրան, որի վրա պատկերվում են մասնավոր հոգսերն ու խնդիրները, որոնք, չդադարելով լինել մասնավոր, երբեք հանրային որակներ ձեռք չեն բերում: Հասարակական տարածությունը դառնում է յուրահատուկ մի

² Токвиль А. О демократии в Америке. М., 1992, с. 99.

³ Sen Sennett R. The corrosion of character: The personal consequences of work in the New Capitalism. New York: W.W. Norton @ co., 1998, էջ 44:

⁴ Beck, U. Ecological Enlightenment: Essays on the Politics of the Risk Society/ Trans. Mark A. Ritter. New Jersey: Humanity Press, 1995, p. 40.

բեմահարթակ, որտեղ հրապարակավ քննարկվում են մարդկանց գաղտնիքներն ու անձնական կյանքի մանրամասները: Հասարակական տարածությունում այլևս հանրային խնդիրներ չեն քննարկվում: Նրան չի հաջողվում իրացնել մասնավոր հոգսերի և հասարակական հիմնախնդիրների քննարկման ասպարեզ դառնալու իր նախկին գործառույթը: Այն, ինչ նախկինում կոլեկտիվ բանականության և հանրային քննարկման արժանի ընդհանուր ձեռքբերում էր, զանգվածային-սպառողական հասարակությունում տրոհվելով և աստիճանաբար մասնատվելով, թողնվում է առանձին մարդկանց անհատական տնօրինությանը: **Անհատացված հասարակությունը սոցիումի կազմակերպման այնպիսի համակարգ է, որն ամեն կերպ փորձում է տնտեսել, խնայել սպառման (ինա՛վայելքի) ժամանակը, ինչով էլ պայմանավորված՝ անշեղորեն արժեզրկվում են կյանքի և մարդկային հարաբերությունների այն ոլորտները, որոնք այս կամ այն կերպ կարող են կապված լինել ժամանակի «ավելորդ», պրագմատիկ նշանակություն չունեցող ծախսումների հետ:** «Ժամանակակից մարդու հիմնական առանձնահատկությունները, որոնք վերաբերում են սպառողական հասարակության բարոյական քննադատությանը, պայմանավորված են ոչ թե բարոյական անկման, այլ սպառման ժամանակի տնտեսման օրենքի գործողությամբ»⁵: Կարծես շարունակելով իր հայրենակցի միտքը՝ Ժ. Դյումազեդյեն գրում է. «Այսուհետ անհատի գերագույն նպատակը ոչ թե մասնագիտական արդյունավետությունն է, սոցիալական օգտակարությունը, մշակութային կամ քաղաքական ակտիվությունը, այլ հենց ինքն է, իր ինքնարտահայտման պահանջումը»⁶: Հասարակայնորեն պասիվ, զուտ մասնավոր կենսակերպը, երբ մարդիկ աշխատանքից հետո նախընտրում են նստել հեռուստացույցի կամ համակարգչի առջև և կամ ժամանակն անցկացնել մտերիմների նեղ շրջանում, ժամանակակից սպառողական, անհատացված հասարակությունում դառնում է յուրահատուկ սովորույթ, անգամ՝ կարևոր արժեք: Նյութապես չտուժելու վախը և կյանքն անհոգ ու անխռով անցկացնելու ձգտումը «չմասնակցության սկզբունքով» ղեկավարվող մարդուն նյութական և հոգևոր առումով անընդհատ կողոպտում են: Սոցիալականի նկատմամբ անտարբեր մարդու անհատական կենսակերպն իր առօրյա դրսևորումներում ծայրահեղորեն պարզունակացվում է: Քաղաքացիական պարտավորություններից ազատված «անձանձիր» անհատական կեցվածքը հանգեցնում է զգալի կորուստներով ուղեկցվող ծանր հետևանքների, որոնցից են.

- **տարածքային-էկոլոգիական բնագավառում.** իշխանավորների ու խոշոր ընկերությունների կողմից մշակովի հողատարածքների և համայնքային արոտավայրերի, հանգստի հանրային գոտիների զավթումը, բնական պաշարների անխնա շահագործումը,

- **բնական-մարդաբանական բնագավառում.** կյանքի որակի անկումը, հիվանդությունների աճը, ծնելիության նվազումը, հանրային առողջապահության որակի շեշտակի անկումը, որն ուղեկցվում է բուժօժանայությունների գների նույնքան շեշտակի բարձրացմամբ,

⁵ **Lepage, H.** Demain le capitalisme.P., 1978, p. 330.

⁶ **Dumazedies, J.** Sociologieempiriq du loisir. P., 1974, p. 25.

- **սոցիոմշակութային բնագավառում.** մշակույթի ու կրթության ձևախեղումը, սոցիալական ինֆանտիլությունը, էկզիստենցիալների կորուստը, թմրամոլության և ինքնասպանությունների աճը,

- **մասնագիտական դերաբաշխման բնագավառում.** արհեստավորների աստիճանական որակազրկումը, աշխատանքի պաշտպանության խախտումները, հարկադրական աշխատանքը, գործատուների կամայականությունը, աշխատանքային միգրացիայի աճը, թրաֆիկինգը:

Առօրյա կյանքում քաղաքացիության հոգսերից ձերբազատված անհատը վայելում է իր չմասնակցությունը՝ կարծելով, թե «իրազեկ մարդիկ» իրեն ազատում են սոցիալական խնդիրների լուծման քաղաքացիական պատասխանատվությունից: Համասոցիալական տարատեսակ խնդիրների լուծման իրավասությունները միայն իրազեկ մարդկանց՝ փորձագետներին, թողնելը հանրային կյանքից ինքնական հրաժարվելու հակաքաղաքացիական կեցվածք է: Անձնական կյանքը հասարակական կյանքից խստորեն, միայն ի շահ իրեն տարանջատող մարդը քաղաքացի չէ, քանի որ չի հասկանում այն պարզ ճշմարտությունը, որ փորձագետ կոչվածն ընդամենն իր ընտրության իրավունքով ստեղծված սոցիալական սարքի պարզ բաղադրատարր է: Այնտեղ, որտեղ անհատները մեկուսանալով ամբողջությամբ խորասուզվում են միայն մասնավոր կյանքի առօրյա, հոգսաշատ խնդիրների մեջ, այնտեղ գերիշխող է դառնում կամ սոցիալ-դարվինիզմի քառոնը, կամ պետական-բյուրոկրատական ապարատը բռնազավթում է մարդկանց քաղաքացիական իրավունքները:

Սոցիալականից հրաժարման մեկ այլ դրդապատճառ է դառնում հասարակական վստահության պաշարի շարունակական նվազումը: **Մարդկային վարքը բաղադրող հիմնական գործոններ են դառնում մշտական կասկածը և հանընդհանուր անվստահությունը:** Հատկապես սոցիալական խոշոր հեղաբեկումներից հետո հասարակական զանգվածների չիրականացված սոցիալական սպասումների և ակնկալիքների «փոխհատուցումը» լինում է այն, որ նրանք հայտնվում են հիասթափության հոգեմաշ մթնոլորտում: Պատահական չէ, որ նման պայմաններում արեսենտիզմը (լատ. *absens(absentis)* բացակայություն) դառնում է հասարակական պայմաններին հարմարվելու գերակա եղանակ: Անտարբերությամբ հագեցած սոցիալական մթնոլորտում մարդիկ, ելնելով իշխանության նկատմամբ անվստահությունից (Հայաստանի պարագայում՝ կոռուպցիայի և կաշառակերության օրավուր աճող մակարդակից, արդարադատության համակարգի թերացումներից, տնտեսության օլիգոպոլ բնույթից և, վերջապես, լեզիտիմ ընտրություններ անցկացնելու հիասթափ փորձերից), կարծում են, որ իրենց մասնակցությունը որևէ կերպ չի ազդելու իրադարձությունների ընթացքի վրա: Այս ամենի հետևանքով անընդհատ խորանում է այն վիճակը, որը գոյանում է սեփական իրավունքները պաշտպանելու և դրա իրականացման համար անհրաժեշտ սոցիալական պայմանները բարելավելու, իսկ հետո նաև՝ դրանք կառավարելու միջև: Իրավիճակի շրջադարձային այդպիսի փոփոխությունը պայմանավորված է «արդար հասարակության» մասին բարոյաքաղաքական խնդրակարգից «մարդու իրավունքների» պաշտպանության խնդրակարգին անցնելու հանգամանքով: Նման դիրքորոշումը

թույլ է տալիս ուշադրությունը բևեռել մյուսներից տարբերվելու, հետևաբար նաև՝ սեփական հայեցողությամբ երջանկության մոդել ու դրան հասնելու համապատասխան ապրելակերպ ընտրելու իրավունքի վրա: **Արժեզրկված հասարակական այլևս սոցիալական խորհրդանշող ընդօրինակման խմբեր չունի:** Անգամ այնպիսի դասական կատեգորիաներ, ինչպիսիք են «ժողովուրդ», «դասակարգ», «մտավորականություն», «պրոլետարիատ», «օբյեկտիվ պայմաններ» և այլն, կորցնում են իրենց երբեմնի արժեքն ու նշանակությունը: Ձանգվածային-սպառողական հասարակությունում ընդօրինակման արժանի սոցիալական միակ դերակատարը «լռակյաց մեծամասնությունն» է (Բողոքիչ), սոցիալական այն ստրուկտուրայի, որի գործառնությունը միայն սիմուլյատիվ բնույթ ունի: Այն ընդօրինակման կարծեցյալ, անիրական սուբյեկտ է, քանի որ անընդունակ է իրականացնելու կոլեկտիվ նույնականացման որևէ հստակ գործառույթ: Քաղաքացուց զուտ սպառող անհատի վերածված «լռակյաց մեծամասնությունը» հասարակականի նկատմամբ, ըստ էության, դառնում է խուլ ու անհաղորդ, սոցիալականի նկատմամբ անտարբեր ու նրանից օտարված: Անտեսելով գործունեության հասարակական ոլորտը, որտեղ կոլեկտիվ ձևով իրականացվում է հակասություններով լեցուն անհատական գոյության շարունակական վերարտադրությունը, մարդիկ բնականորեն ձգտում են պարզունակացնել իրենց գոյավիճակը: Իրական կյանքի հասարակական բաղադրիչն իր նշանակությունը կորցնում է: **Ձանգվածային տեղեկատվության միջոցները, մարդկանց ծանրաբեռնելով տարատեսակ վարկանիշների մասին ավելորդ, հաճախ ապակողմնորոշող լուրերով, նրանց պատասխանատու սուբյեկտից վերածում են մանիպուլյացիայի օբյեկտի:** Դա, բարոյական առումով, նրանց դարձնում է աննրբանկատ ու գռեհիկ, ստիպում գործել ոչ թե սեփական կամքով, այլ այլոց հրաման-հրահանգներով: Այդ հանգամանքն անդրադառնում է քաղաքական անտարբերության խորացող տրամադրությունների վրա: Գերպրագմատիկ ժամանակակից հասարակությունն անձին վերարտադրում է գործառույթային միևնույն որոշակիությամբ, ձևավորվում է «միաչափ մարդը», որը դառնում է «բողոքի պարտված տրամաբանության արտահայտիչը» (Յ. Մարկուզե): **Կյանքի անորոշությունից սերված բիրտ կեցվածքը և անընդհատ խորացող դեպրեսիվ վիճակն աստիճանաբար վերասերում են մարդուն, հավատազրկելով քաղաքացուն՝ նրան վերածում նյութական բարիքներ սպառող անհատի:** Վերջինս, դրսևորելով ծայրահեղ պատեհապաշտություն, հոգեբանորեն չի կապվում որևէ սոցիալական խմբի հետ, չի ընդունում արժեքանորմատիվային որևէ համակարգի գերակայություն, եթե այն այս կամ այն կերպ սպառնում է իր օգուտին ու շահին: Անօտարելի նախկին արժեքներն ստանում են ապրանքաիրային տեսք, կյանքը վերածվում է սպառման իրական և վիրտուալ առարկաների ձեռքբերման հավերժական մրցավազքի: **Բեմականացումը դառնում է քիչ թե շատ հանրային նշանակություն ունեցող ցանկացած իրողության կարևորագույն պայմանը, կյանքը վերածվում է տարատեսակ ու վիթխարի շուկաների անվերջանալի թատերահանդեսի, որտեղ պարտված քաղաքացին իր տեղը գիջում է մարդ-զանգվածին:** Ժամանակից դուրս սայթաքած մերօրյա ա-

գորան վերածվում է հուզական լիցքաթափման աղմկոտ բեմահարթակի: Բեմականացումը ներթափանցում է նաև համահասարակական հարցերի քննարկման ավանդական բնագավառը խորհրդանշող այն ոլորտը, որը նախկինում քաղաքականության մենաշնորհն էր: Քաղաքականությունը կորցնում է անհատ-քաղաքացու լուրջ և ակտիվ գործունեություն ծավալելու հանրային ասպարեզի գործառույթը: Ընդամին, բեմականացումը, դրա ձևն ու բովանդակությունը ծառայում են գոյություն ունեցող քաղաքական ու սոցիոմշակութային համակարգերի պայմանների ու նպատակների լիակատար արդարացմանը: Այսպիսի «սոցիալական շոուն» հասարակական բարդ ու հակասական կյանքի պարզունակացված տարբերակն է: Այն նպատակամղված է կեղծ ռեալության մթնոլորտի ստեղծմանը, ինչը մարդուն զրկում է իրականը տեսնելու և գնահատելու հնարավորությունից: Աշխարհի հետ հարաբերման գերակա եղանակ է դառնում պատրանքային գիտակցությունը: Մարդկանց գործունեության մեջ էապես մեծանում է խորհրդանշական բնույթ ունեցող տեղեկատվական միջնորդ օղակների (ռադիո, հեռուստատեսություն, համացանց) դերն ու նշանակությունը: Դրանք դառնում են հասարակականի հետ հաղորդակցման գերիշխող, իսկ ոմանց համար նաև միակ և անփոխարինելի եղանակ: Հոգեվարքի մեջ հայտնված բնական-անմիջականն իր տեղը զիջում է արհեստական-միջնորդավորվածին: **Նշանը (տեքստը) դառնում է մարդկային փոխհարաբերությունների սիմուլյատիվ որոշարկիչ: Հաղորդագրությունն ավելի է կարևորվում, քան իրադարձությունը:** Եթե նախկինում հասարակության կառուցվածքային միավորները ձևավորվում էին ծագումնաբանական, տնտեսական կամ քաղաքական գործոնների ազդեցությամբ, ապա հարաճուն տեխնոլոգիական նվաճումների շնորհիվ այդ գործառույթը հիմնականում իրացվում է տեղեկատվության յուրացման միջոցով: Տեղեկատվությունը դառնում է կուտակված սոցիալական էներգիայի դրսևորման ու ծավալման և համախոհների հետ վիրտուալ շփման գլխավոր միջոց: Սոցիալականացման մակարդակը չափվում է ոչ այնքան ինստիտուցիոնալ կապերի զարգացման աստիճանով, որքան շրջանառվող տեղեկույթի քանակով: Այս գործընթացների հետևանքով «սոցիալականության դաշտը» աստիճանաբար կրճատվում և ուժազրկվում է: **Անհատացումը հանգեցնում է նրան, որ «մասնագետներն ու փորձագետները» իրենց «եզրահանգումները», հակասություններն ու կոնֆլիկտները հանձնելով անհատին, նրան անմիջապես լքում են՝ առաջարկելով ստեղծված հակասական իրավիճակից ելքեր փնտրել՝ ապավինելով սեփական կարողություններին ու փորձին:** Այս ամենի հետևանքով, ինչպես հեզանքով նշում է Ուլրիխ Բեկը, մարդիկ ստիպված համակարգային հակասություններին տալիս են կենսագրական լուծումներ: Այսպիսով, բողոքական էթիկայի երբեմնի խստակյաց սկզբունքներով առաջնորդվող ճգնակյաց մարդուն, որի ամենակարևոր հատկանիշը հավատարմությունն էր գործընկերային հարաբերություններին, զանգվածային սպառման անհատացված հասարակությունում փոխարինում է մարդու վերածնված արխաիկ, արկածախնդիր, վաշխառուական, ինքնակոչ տիպը: Մինչև ուղնուծուծը աշխարհիկացած, գերպրագմատիկ այսպիսի մարդն անընդունակ է ապրելու հետաձգված երջանկությամբ: Ապագան

ներկային ստորադասած անհատին անծանոթ են հապաղումը, զոհականությունը, տրանսցենդենտ արժեքները: Անհատացված աշխարհում ոչ թե համարողկային իդեալները, հումանիստական արժեքները, քաղաքական հայեցակարգերը կամ սոցիալական ծրագրերն են որոշարկուն անհատական վարքը, այլ միայն սահմանափակ թվով այն անձանց օրինակները, որոնք, անկախ գործունեության ոլորտից, ձևից, ուղղվածությունից ու իրացման եղանակից, հասնում են հաջողության և արժանանում հանրային ճանաչման: Սեփական խնդիրները հաղթահարելու համար այդպիսի «հաջողակներին» կրկնօրինակելը դառնում է երջանկության մոդելի կերտման արդյունավետ գործիքը: Ինչ խոսք, այս կամ այն մարդու օրինակին ապավինելը, և, դրանով պայմանավորված, վարքի, հետևաբար՝ դրանից բխող հետևանքների պատասխանատուն անքննադատ ընդօրինակողն է: Այսպիսով, **անհատացման ճնշումն աստիճանաբար, բայց խիստ հետևողականորեն մարդկանց զրկում է քաղաքացիության զրահաբաճկոնից, քաղաքացուն բնորոշ հմտություններից ու շահերից, ուստիև՝ քաղաքացիական կեցվածքից: Համահասարակականը՝ որպես քաղաքացիականի սնուցման հիմնական ավիշ, աստիճանաբար մեռուկանում է:** Իրականում, ի մոտո անշոշափելի հաջողության տեսլականը դառնում է ոչ թե զրահ, այլ պատանք: Սոցիալական գետնաքարշ կյանքը մարդուն դիմազրկում է: «Նման հանգամանքներում, - նկատում է Բաումանը, - դե-յուրե անհատի վերածումը դե-ֆակտո անհատի (այսինքն՝ մի մարդու, որն ինքն է տնօրինում իրական ինքնորոշման համար անհրաժեշտ ռեսուրսները) անհասանելի է թվում»⁷: Դե-յուրե անհատը չի կարող դե-ֆակտո անհատ դառնալ, եթե նախապես քաղաքացի չի դարձել: **Առանց անկախ հասարակության, անկախ մարդիկ չեն լինում:** Հասարակության անկախությունը պահանջում է գիտակցական և մշտապես ու խորությամբ գիտակցվող ինքնորոշում: Այդպիսի հասարակությունը միայն իր բոլոր անդամների ընդհանուր ու նպատակասլաց ջանքերի վարձատրյալ արդյունքը կարող է լինել:

Հասարակականի և անհատականի նշանակալիորեն նոսրացած նախկին հանդիպավայրը հանդիսացող սոցիալական ոլորտն անհրաժեշտ է սկզբունքորեն վերակառուցել, վերակառուցել ժամանակի ոգուն և պատմական մարտահրավերներին համապատասխան: Մարդիկ պետք է նորովի իմաստավորեն քաղաքացիական մոռացված արժեքներն ու հմտությունները, քաղաքացիության այն փորձարկված հնարավորություններն ու ներունակությունները, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունն ու համահասարակական նշանակությունը: Միայն մասնակցության ամենօրյա ժողովրդավարության մեջ ներառված անհատները կարող են լինել թե՛ «ջունգլիների օրենքի» և թե՛ «գորանոցային օրենքների» արդյունավետ հակակշիռը:

Դառնանք քննարկվող խնդրի հայ իրականությանը բնորոշ դրսևորումներին: Հայոց հասարակական կյանքն ընթացել է առավելաբար պետականազուրկ գոյության պայմաններում: Ուստի պատահական չէ, որ հասարակության ու անհատի հարաբերություններն իրավունքների ու իրավական պարտականությունների հարաբերություններ չեն եղել: Դրանք

⁷ Бауман З. Текущая современность. М.-СПб., 2008, с. 48.

եղել են զուտ հոգևոր-բարոյական հարաբերություններ, որոնց մակարդակը և գործառնության առանձնահատկությունները պայմանավորված են եղել սոցիալ-պատմական կոնկրետ իրավիճակով և ազգի հոգևոր-մշակութային զարգացման մակարդակով: Այն ժամանակ, երբ արևմտաեվրոպական երկրներում և Յուսիսային Ամերիկայում ձևավորվում ու ամրապնդվում էին քաղաքացիական հասարակություններ, հայության ճնշող մեծամասնությունը հեծում էր Պարսկաստանի ու Թուրքիայի, ապա նաև Ռուսաստանի նման արևելյան բռնապետությունների լծի տակ՝ **հպատակի** ու ազգային-կրոնական փոքրամասնության կարգավիճակում: Իրավիճակն առանձնապես չփոխվեց խորհրդային ամբողջատիրության պայմաններում, իսկ անկախության երկու տասնամյակը չհասցրեց արմատավորել քաղաքացիական հասարակության կայուն ավանդույթներ: Մինչև ղարաբաղյան շարժմամբ սկզբնավորված ազգային-ժողովրդավարական զարթոնքը և Յայաստանի Յանրապետության ստեղծումը **հայ անհատը, ըստ էության, չհասցրեց դառնալ քաղաքացի, քանի որ իրավիճակային լուծումներ պահանջող հարափոփոխ հանգամանքներն ու անցքերը հայ մարդու մեջ ձևավորել էին քաղաքացիական ուղորտը կազմող առանցքի՝ համասոցիալական խնդիրների նկատմամբ առընթեր, ոչ պատասխանատու վերաբերմունք:** Համակեցության այդպիսի կենսածնը (հասարակայնորեն ընդունելի և անձնապես իմաստավորված քաղաքացիական արժեքների բացակայությունը) ստեղծել էր այնպիսի իրավիճակ, որ մարդիկ վարքի կարգավորիչներ էին դարձրել անցողիկ, պարագայական, հիմնականում գոյատևմանը ծառայող արժեքներ: Վերջին մի քանի դարերում հայ մարդկանց համախմբող սոցիալական առանցքը եղել է հուզական-զգացմունքային և ոչ քաղաքացիական-սոցիալական: Առընթեր ժամանակին պատանդ դարձած հայ անհատը ստիպված է եղել ապավինել գոյատևման միայն այնպիսի մեխանիզմների, որոնք կարող էին լինել անձնական (ազգակցական) փրկության երաշխավոր: «Մեր ազգային կյանքի պատմական փորձը ցույց է տալիս,- նշում է Է. Հարությունյանը,- որ անհնարինության հասնող մի իրավիճակ է պետք, անհապաղ սխրագործության գնալու մի տագնապալի իրողություն, այն էլ՝ մինչև անհնարինության հաղթահարումը: Հետո սկսվում է սովորական դարձած ջախջախիչ մասնատումը և հանրային պատմության ընդհատումը»⁸: Չունենալով հանրային ապահովությունը երաշխավորող սոցիալական կառույց՝ ինքնիշխան ազգային պետություն, հայ մարդը հարկադրաբար ընտրել է ժամանակի փորձությանը դիմացած գոյատևման հատվածական-հայրենակցական գոյածն: Հասարակական կյանքը կառուցվել է ոչ այնքան սոցիալ-տնտեսական օրինաչափություններով, որքան հատվածական-հայրենակցական գոյատևումն ապահովող պարտավորություններով ու սկզբունքներով: Գուցե սա է այն հիմնական պատճառը, որ «գործնապաշտ ու ձեռներեց հայ անհատների հավաքականությունը քաղաքացիական ինքնության ձևավորման կեսճամփին մշտապես դեմ է առնում ազգակցական ինքնու-

⁸ Է. Հարությունյան «Էթնոմշակութային ապաստարանը» որպես գոյատևման գեղագիտական նախագիծ // Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2010, 132.4, էջ 9:

թյան բարիկադներին՝ այդպես էլ մնալով «տրամադրությամբ» ղեկավարվող խառնամբոխ: **Սա հետևանքներից այն վատթարագույնն է, երբ քաղաքացիական ամբողջը անդամահատվում է, և հանրային կյանքի ազգային մեկնաբանի գործառույթը մնում է նրանց մենաշնորհը, ովքեր կառավարելի հասարակություն ունենալու և իրենց իշխանությունը ժառանգական դարձնելու նպատակով նախընտրում են Ազգականությանը օժտել օրինականության քաղաքական լիազորություններով»⁹ (ընդգծումն իմն է - Գ. Ս.)**

Ինքնիշխան ազգային պետության բացակայության պայմաններում անձը հանդես է գալիս միայն որպես հպատակ կամ առավելագույնս՝ պետական քաղաքացի, այսինքն՝ մի քաղաքացի, որը սոցիալական համակարգից չօտարվելու, չմեկուսանալու նկատառումներով պարտադրված է իր վարքն իրացնել իշխող քաղաքական կարգերին ու գաղափարախոսական արժեքներին համապատասխանող հնազանդ հպատակի առերևույթ օրինապահ, իրականում իներտ ու անտարբեր կեցվածքով, բայց, ավա՛ղ, ոչ որպես սրտացավ ու պատասխանատու ազատ քաղաքացի: Իհարկե, մարդը որոշակի պարտավորություններ ունի այն պետության հանդեպ, որտեղ նա ապրում է (պաշտպանել հայրենիքը, վճարել հարկերը), որոնց մի մասն անշուշտ ծառայեցվում է հասարակությանը, այն էլ՝ միջնորդավորված ձևով, սակայն, ընդհանուր առմամբ, հասարակության հանդեպ համապարտ վերաբերմունք չունի: Ավելին, ամբողջատիրության դեպքում, երբ պետությունը նույնանում է հասարակության հետ, պետությունն է որոշում անհատի իրավունքների ու ազատությունների շրջանակը, բացարձակացվում է պետության ինքնիշխանությունը, և ամեն ինչ, այդ թվում և՛ մարդու իրավունքներն ու ազատությունները, ենթարկվում են պետության գերգաղափարայնացված շահերին: Այս ամենը կատարվում է հարկադրաբար, օրենքի (հաճախ՝ անիրավական օրենքի) ուժով: Այս դեպքում անհատը հասարակության հանդեպ պարտականություններ չունի, դրանք միայն պետության հանդեպ են:

Անկախության քսան տարիները չկարողացան ամբողջովին փոխակերպել հասարակությունից մեկուսի և պետությունից օտարված գոյատևող հայի կերպը: Չավարտված հայ-ադրբեջանական պատերազմը, տնտեսական կոլապսը, սոցիալական անպաշտպանվածությունը, քաղաքական վերնախավի անամոթ մանիպուլյացիաները և բազում այլ աղետները մեր բնակչությանը կանգնեցրել են այնպիսի լուրջ մարտահրավերների առջև, որոնք ինքնուրույն լուծելու արդյունավետ միջոցների նա չի տիրապետում, իսկ պետությունը, ի դեմս պետական աստիճանավորության ու ինստիտուտների, խուսափում է համընդհանուր շահերին հետամուտ առաջնորդ-կազմակերպող իր սրբազան պարտականություններից և դարձել է իշխողների անձնական շահերը սպասարկող մեքենա:

Աշխարհաքաղաքական հայտնի հանգամանքների և ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ժամանակակից հայ սոցիումը հայտնվել է այդ փորձությունների սաստկացման նորագույն փուլում: **Տիրապետման կլանային լծակների ժառանգորդման, կայունության ապահովման և ի-**

⁹ Նույն տեղում, էջ 13:

րավակարգի պահպանման իշխանությունների «ջանադիր» գործողությունների հետևանքով հաճախ ոտնահարվում են հանրապետական արժեքները, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը: Որպես հետևանք՝ քաղաքացիների նոսրացող շարքերի հաշվին արագորեն բազմապատկվում է սոցիալականի նկատմամբ իներտ ու անտարբեր անհատների քանակը: Հասարակական կյանքի առօրյա ընկալումներում իշխանության գաղափարը փոխարինվում է որոշ մարդկանց տնտեսական ու քաղաքական անսահմանափակ գերիշխանության գաղափարով: Ժողովուրդն այնքան է օտարվում իշխանությունից, որ «աղետածին միջավայրի՝ որպես հայոց գոյատևման պարադոքսալ շարժառիթի» (Է. Աթայան) ժամանակակից այլընտրանք է դարձել ահազնացող արտագաղթը: Այս ամենի հետևանքով **իշխանությունն ինքն իրեն դատապարտել է սոցիալական փակուղում հայտնվելու անցանկալի հեռանկարին, քանի որ սրտացավ ու պատասխանատու քաղաքացիների աջակցության փոխարեն՝ ստիպված ապավինում է իրադրապաշտ ու աչառու չինովնիկներին (վարչական ռեսուրս) և ամենակարող օլիգարխներին:** Ինքնիշխան ու ազգային առումով միատարր մի այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, **հասարակություն-պետություն-անհատ հարաբերությունների հիմքը պետք է լինի համապարտ պատասխանատվություն կրող ինքնորոշված ազատ քաղաքացիների հանրությունը՝ ժողովուրդը, այլ ոչ թե անհատը, ինչպես ընդունված է արևմտյան արժեհամակարգում:** Սակայն, սա ամենևին չպետք է նշանակի, որ պիտի անտեսվեն ու ոտնահարվեն մարդու իրավունքները: Դրանք պետք է հստակորեն ներդաշնակված լինեն հասարակական շահերին, այսինքն՝ համահունչ լինեն հասարակական հարաբերությունների ամբողջությանը: Հայ մարդը, իր մեջ հաղթահարելով պետության վերացական քաղաքացուն, այսինքն՝ այն քաղաքացուն, որն օժտված է հավասար, բայց մարդկանց ամենօրյա հոգսերի ու խնդիրների լուծման հետ կապ չունեցող ձևական իրավունքներով, պետք է որպես ինքնիշխան պետության ազատ քաղաքացի դառնա ինչպես հավաքական ինքնաճանաչման պահպանման, տնտեսական ու մշակութային զարգացման, այնպես էլ անձնական բարեկեցության կերտման տերն ու պատասխանատուն:

ГАГИК СОГОМОНЯН – *Индивид против гражданина.* – Общество входит в опасную зону, где социальное существование превращается в совокупность субъективированных и индивидуализированных рисков и противоречий. Пренебрегая общественными обязанностями, человек подчиняет их личному успеху. Возрастающий в обществе вакуум безразличия к политике заполняется частной жизнью, в результате общественная сфера «вымывается». Из гражданина человек постепенно превращается в индивида-потребителя. Запас общественного доверия к власти снижается, и сомнение и недоверие становятся основными факторами, предопределяющими поведение человека.

В статье анализируются характерные особенности индивидуализированного общества и делается вывод, что основой взаимоотношений общество – государство – индивид должна быть совокупность свободных, самоопределившихся граждан, носителей солидарной ответственности. Хозяином, отвечающим за сохране-

ние коллективной идентичности, а также творцом и созидателем личного благо-
состояния должен стать не абстрактный гражданин абстрактного государства, но
свободный гражданин суверенного государства.

GAGIK SOGHOMONYAN – *The Individual against the Citizen.* – Contempo-
rary society functions in a risky zone where the social existence is converted into a mass
of subjective and individual risks and controversies. Neglected social duties are under-
mined by individual success. The increasing social vacuum of political indifference is
enriched by intimacy of individual life and as a result the social sphere is "decolonized".
Men gradually change from a citizen into a mere individual-consumer. As a result of
decreased capital of social trust suspicion and distrust become main factors that organize
human behavior.

Based on analysis of characteristic specificities of individualized society, this arti-
cle concludes that on the bases of society-state-individual relationship there must be a
mass of free, self-determined citizens who have solidarity and responsibility. Overcom-
ing the abstract citizen of a state within himself, the human must become a free citizen
of a sovereign state and undertake responsibility of protecting collective identity and a
creator of individual well-being.